ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍՈՆԱ ԱՐԱՅԻԿԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԴԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ (ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)

**Է.00.04. - «Ազգագրություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2019

**ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

НЕРСИСЯН СОНА АРАИКОВНА

РОЛЬ СОЦИАЛЬНЫХ СЕТЕЙ В АРМЯНСКОЙ ДИАСПОРЕ (ЭТНОСОЦИОЛОГИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

АВТОРЕФЕРАТ

**диссертация на соискание ученой
степени кандидата исторических наук
по специальности 07.00.04 “Этнография”**

ЕРЕВАН-2019

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ պ. գ. դ. ***Ռ.Ս.Կարապետյան***

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ. գ. դ. ***Մ.Վ. Գալստյան***

պ. գ. թ. ***Ռ.Ս. Օհանջանյան***

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան Սփյուռքագիտության ամբիոն

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թ. հոկտեմբերի 18-ին, ժամը 14:00-ին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի 007 Հնագիտության և ազգագրության մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0025, ք. Երևան, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2019 թ. սեպտեմբերի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

Պատմական գիտ. թեկնածու՝ ***Ա.Է. Հարությունյան***

Тема диссертации утверждена на заседании ученого совета Института археологии и этнографии НАН РА.

Научный руководитель: доктор ист. наук ***Р.С. Карапетян***

Официальные оппоненты: доктор ист. наук ***М.В. Галстян***

кандидат ист. наук ***Р.С. Оганджанян***

Ведущая организация: Кафедра исследований диаспоры Ереванского государственного университета

Защита состоится 18 октября 2019 г. в 14:00 часов, на заседании специализированного совета 007 по археологии и этнографии при Институте археологии и этнографии НАН РА (адрес: Ереван-0025, ул. Чаренца, 15).

Диссертацию можно найти в библиотеке Института археологии и этнографии НАН РА.

Автореферат разослан 7 сентября 2019 г.

Ученый секретарь специализированного совета,

Кандидат ист. наук ***Арутюнян А.Э.***

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից միգրացիոն գործընթացների արդյունքում ձևավորվում են էթնիկ, սփյուռքյան համայնքներ նոր միջավայրերում, որոնք իրենց սոցիալական բովանդակությամբ և կառուցվածքով հետաքրքրություն են ներկայացնում սոցիալ-հասարակական գիտությունների հետազոտողների համար: Դրանց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալ համայնքային ինքնակազմակերպման գործընթացները և հետևել կառուցվածքային փոփոխությունների օրինաչափություններին: Վերջինիս բացահայտման համար կարևոր է դառնում սոցիալական կապերի ուսումնասիրությունը սփյուռքյան համայնքներում: Հետազոտական թեմայի ընտրությունը պայմանավորված է հայկական սփյուռքի համայնքներում սոցիալական կապերի գործառնության առանձնահատկությունների ուսումնասիրության անհրաժեշտությամբ, քանի որ այն հնարավորություն է ընձեռում հասկանալ համայնքներում սոցիալական հարաբերությունների բնույթը, կառուցվածքը, համայնքի ինքնակազմակերպման մեխանիզմները: Վերջիններս կախված են մի շարք գործոններից, ընդհանուր (ընդունող երկրի վարչակարգ, կրոնական, էթնիկ կառուցվածք, տնտեսական վիճակ) և առանձնահատուկ (ընդունող հասարակության վերաբերմունք, ներգաղթի պատճառ և այլն) խմբերի: Այդ գործոնները ներազդում են համայնքի վրա՝ որոշելով դրա սահմանները, կառուցվածքը, ներկայացուցիչների կարգավիճակը, ինչպես նաև առկա խնդիրներն ու մարտահրավերները:

Հայկական սփյուռքը ձևավորման ընթացքում ստեղծել է ինքնակազմակերպման իր մեխանիզմները, որոնք, բնորոշ դառնալով հայկական սփյուռքին, ընդունվում են որպես դրա առանձնահատկություն: Այդ մեխանիզմները հիմնված են սփյուռքում գործող սոցիալական հարաբերությունների վրա, որոնք իրենց կառուցվածքով ցանցային են:

Այս առումով շատ կարևոր է ուսումնասիրել, թե այլ միջավայրերում հայերն ինչպես են հաստատում և զարգացնում հարաբերություններ, արդյո՞ք պահպանվում են նշյալ առանձնահատկությունները, և ի՞նչ փոփոխությունների են ենթարկվում արտաքին միջավայրի ազդեցությամբ:

Ատենախոսության հետազոտության օբյեկտը: Աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության օբյեկտ են հանդիսանում հայկական սփյուռքի երկու՝ Թեհրանի և Բեյրութի համայնքների ներկայացուցիչները և համայնքային կազմակերպությունները:

Ատենախոսության հետազոտության առարկան: Աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության առարկա են հանդիսանում հայկական սփյուռքի համայնքներում առկա սոցիալական հարաբերությունների ցանցը, դրա դերը սփյուռքում:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ներկայացված ատենախոսության նպատակն է պարզել սոցիալական ցանցի դերը սփյուռքում՝ Թեհրանի և Բեյրութի հայ համայնքների օրինակով: Նշված համայնքների համադրական համեմատությունը հնարավորություն է ընձեռում հասկանալ համայնքում սոցիալական ցանցի գործառույթները, ցանցի դերը համայնքի ինքնակազմակերպման գործում, դրա գործառնության մեխանիզմները և այլն: Ընդհանուր առմամբ, օրինաչափությունների ընդհանրացման և տիպաբանման արդյունքում դուրս է բերվել սոցիալական ցանցի գործառնության առանձնահատկություններն այլէթնիկ միջավայրում:

Աշխատանքում առաջադրվել են հետևյալ հետազոտական խնդիրները.

- սոցիալական ցանցի ձևավորման էթնիկ առանձնահատկությունները
- սոցիալական կապերի գործառնության առանձնահատկությունները տարբեր էթնոսոցիալական միջավայրերում
- էթնիկ ինքնության ընկալման, կառուցակցման, պահպանման և համայնքային կառույցների գործունեության փոխազդեցությունը սփյուռքում
- էթնիկ համայնքների ինքնակազմակերպման մեխանիզմներն այլազգի միջավայրում

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Գիտական և հետազոտական դաշտում թեմայի վերաբերյալ առկա տեսությունները և հետազոտություններն անդրադառնում են խնդրի առանձին կողմերին՝ կենտրոնանալով կա՛մ սփյուռքի, կա՛մ համայնքների և կա՛մ միայն սոցիալական ցանցերի խնդիրներին: Սակայն, հայկական սփյուռքի համայնքների վերաբերյալ սոցիալական ցանցերի ուսումնասիրությանն ուղղված հետազոտություններ չեն իրականացվել:

Այնուամենայնիվ, ընդհանրացնենք վերոնշյալ յուրաքանչյուր գաղափարի վերաբերյալ տարբեր մոտեցումները:

Սոցիալական ցանցերի գաղափարը հենվում է երկու տեսությունների՝ ինտերակցիոնիզմի և ստրուկտուրալիզմի հիմնադրույթների վրա: Դրանցից բխող առանձին մոտեցումները ևս ցանցային հարաբերությունների բնույթը հասկանալու և վերլուծելու հիմք են ծառայում:

Սոցիալական ցանցերի նկարագրությանը անդրադարձել են Կ. Լեվի-Ստրոսսը, Ռ. Մերտոնը, Պ. Հոլլանդը, Հ. Ուայթը, Մ. Գրանովետտերը, Ջ. Բարնսը, Ջ. Մորենոն, Ջ. Կոուլմանը, Է. Միտչելը, Ռ. Պատնամը, Պ. Բուրդյեն:

Հետխորհրդային հետազոտողներից երևույթի ուսումնասիրությամբ զբաղվել են, մասնավորապես, Ռ. Աբրամովը (սոցիալական կառուցվածքների հայեցակարգը տեղեկատվական հասարակությունում), Ի. Պրիգոժինը (ցանցային հասարակության ուսումնասիրություն), Ն. Ռոմանովսկին և Ա. Մալցևան, ինչպես նաև Գ. Գրադոսելսկայան (ցանցային տեսությունները և չափումները ժամանակակից սոցիոլոգիայում):

Հայ հետազոտողներից սոցիալական ցանցի հիմնարար դրույթներին իրենց աշխատություններում անդրադարձել են Է. Կարապետյանը (Հայկական ընտանիքը[1]), Ռ. Կարապետյանը (Միգրացիան և նոր հայկական սփյուռքը[2]), Մ. Գալստյանը (Արտագնացությունը Հայաստանում (19-րդ դարի երկրորդ կես-20-րդ դարի 80-ական թվականներ))[3]:

Սփյուռքի հարցերին անդրադարձել են Գ. Շեֆֆերը, Ու. Քոնները, Ռ. Քոհինը, Ու. Սաֆրանը, Ռ. Բրուբեյքերը, Ֆ. Անթիասը, Ս. Հոլլը, Պ. Վերբները, Հ. Բհաբհան, Իպշտեյնը, Տ. Ցուդան, Գ. Գրադոսելսկայան, Ա. Զուրակովը, իսկ հայ հեղինակներից՝ Է. Մելքոնյան, Ա. Եղիազարյան, Խ. Թոլոյյան, Հ. Չիլինգիրյան, Վ. Սահակյան: Նրանց աշխատություններում անդրադարձ է կատարվել սփյուռքի սահմանմանը, տիպաբանմանը, ձևավորման և զարգացման առանձնահատկություններին, ինքնակազմակերպմանը, սփյուռքյան կառույցներին, սփյուռքի կառուցվածքային և բովանդակային կողմերին, սփյուռքի ուսումնասիրության մեթոդաբանությանը, ինչպես նաև հայկական սփյուռքի պատմությանը, ինքնությանը և լեզվական-մշակութային վարքին:

Ատենախոսության աղբյուրագիտական և իրավանորմատիվային հիմքը: Աշխատանքի հետազոտական հիմքը կազմում են ձևայնացված, փորձագիտական և խորին հարցումները, դիտարկման արդյունքները, որոնք հեղինակի կողմից իրականացվել են 2013 և 2015 թթ. Թեհրան (ԻԻՀ) և Բեյրութ (ԼՀ) քաղաքներում: Սույն ատենախոսության մեջ

---

[1] Карапетян Э.Т., Армянская семейная община, Ереван, 1958.

[2] Կարապետյանը, Ռ., Միգրացիան և նոր հայկական սփյուռքը, Երևան, 2015:

[3] Գալստյանը Մ., Արտագնացությունը Հայաստանում (19-րդ դարի երկրորդ կես-20-րդ դարի 80-ական թվականներ, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հայ ժողովրդի բանահյուսություն և ազգագրություն 26, Երևան, 2009:

օգտագործվել են նաև տարբեր կազմակերպությունների կողմից իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքները, ինչպես նաև այլ երկրորդային տվյալներ:

Սկզբնաղբյուրի արժեք ունեն նաև ազգագրագետների, հասարակական ու միջազգային կազմակերպությունների կողմից անցկացված հարցումների նյութերը, որոնք ևս ենթարկվել են ընտրողական վերլուծության:

Ատենախոսության մեթոդական հիմքերը: Հետազոտության տեսա-մեթոդաբանական հիմքում ընկած են էթնիկ ինքնության, սփյուռքի ուսումնասիրության, սոցիալական ցանցի դասական հայեցակարգային մոտեցումները, որոնք դիտարկվել են համեմատական վերլուծության մեթոդով: Անհրաժեշտ հավելյալ տեղեկատվության սակավությունը լրացվել է հետազոտական դաշտում առկա տվյալների երկրորդային մշակման եղանակով: Կիրառվող մեթոդաբանությունն ապահովում է ստացված արդյունքների հուսալիությունն ու հավաստիությունը, որոնք գիտական, տեսական և գործնական նախադրյալներ են մի շարք մեթոդների կիրառման համար: Դրանք տրամաբանորեն կենտրոնացած են հետազոտության նպատակի, օբյեկտի, առարկայի, կանխավարկածների բացահայտման վրա:

Որպես էմպիրիկ հետազոտության մեթոդներ կիրառվել են՝

- Տվյալների տեսական վերլուծության մեթոդներ (գիտական գրականության վերլուծություն, համակարգային-կառուցվածքային վերլուծություն, ընդհանրացում, մեկնաբանություն).
- Տվյալների վիճակագրական մշակման մեթոդներ (SPSS-վիճակագրական փաթեթ սոցիալական գիտությունների համար).
- Տվյալների մեկնաբանության մեթոդներ (տիպաբանում, կորելացիոն կապերի գնահատում, գրաֆիկական տվյալների վերլուծություն, քարտեզագրում):

Հետազոտությունն իրականացվել է քանակական և որակական մեթոդների զուգորդմամբ: Որպես կիրառական ուսումնասիրության մեթոդներ ընտրվել են՝

- Ձևայնացված հարցում, որն անցկացվել է Թեհրանի և Բեյրութի հայ համայնքներում ներգրավված հայերի հետ՝ քվոտային ընտրանքով և ձնակույտի մեթոդով: Հարցմանը մասնակցել են 230 հոգի՝ Թեհրանում, 250 հոգի՝ Բեյրութում: Մասնակիցները 18 տարեկանից բարձր են և ներգրավված են համայնքային կյանքում:
- Դիտարկում՝ չներգրավված և առանց պլանի ձևաչափով:
- Փորձագիտական հարցում՝ տվյալ հիմնախնդրով համայնքի փորձագետների հետ (42 հոգի): Որպես փորձագետ են դիտարկվել

համայնքային հիմնական կազմակերպությունների պատասխանատուները՝ պահպանելով ներկայացուցչականության և համակողմանիության սկզբունքը (համայնքային ավանդական կառույցներ, երեք եկեղեցի, երեք կուսակցություն, բազմազան դպրոցներ, մարզական և մշակութային, սկաուտական միություններ, բարեգործական համահայկական և տեղական կառույցներ, տպագիր մամուլ, ռադիո), ինչպես նաև համայնքային կյանքում որոշակի ազդեցություն ունեցող «առանցքային անհատներ», ովքեր համայնքում ունեն չեզոք դիրքորոշում, սակայն անհատապես կամ համախոհների հետ իրականացնում են համայնակենտրոն գործունեություն:

- Խորին հարցազրույց, որտեղ ընդգրկվել են համայնքի ներկայացուցիչներ ըստ իրենց հմտությունների և տեղեկացվածության աստիճանի (31 հոգի):

Տվյալների վերլուծությունն իրականացվել է նկարագրական վերլուծության և ցանցային վերլուծության մեթոդներով:

Համայնքների ընտրության ժամանակ հաշվի են առնվել մի շարք գործոններ. կարևորվել են ինչպես դրանց ընդհանրությունները, այնպես էլ տարբերությունները:

Ընդհանրություններ. երկու համայնքներն էլ համարվում են ավանդական, դասական տիպի համայնքներ, երկուսն էլ ձևավորվել են մահմեդական, այլակրոն միջավայրում, երկու երկրում էլ հայերն ունեն նմանատիպ կարգավիճակ (դիտվում են որպես կրոնական փոքրամասնություն, օրենսդրությամբ կարգավորվում է նրանց ներկայացվածությունը որպես կրոնական համայնք, նրանց ներկայացվածությունը խորհրդարանում, կառավարությունում և այլն):

Տարբերություններ. երկուսն էլ ունեն լեզվական առանձնահատկություն՝ արևմտահայերեն և արևելահայերեն՝ դասական ուղղագրությամբ, համայնքները ձևավորվել են տարբեր պատճառներով և ունեն տարբերություններ՝ համայնքի գոյության տևողության, ելակետային տնտեսական պայմանների, Հայաստանից ունեցած հեռավորության, ընդունող երկրների տարբերության (չափ, բնակչություն, ժողովրդավարության, բարեկեցության աստիճան և այլն) ցուցանիշներով:

Արդյունքների նորույթը և պաշտպանության ներկայացվող հիմնադրույթները: Աշխատանքի գիտական, տեսական նորույթն այն է, որ սփյուռքագիտության մեջ դասական համարվող հայկական սփյուռքի սոցիալական հարաբերությունների համակարգն ուսումնասիրվել է ինտերակցիոնիզմի և ստրուկտուրալիզմի տեսությունների շրջանակներում, միջգիտակարգային մոտեցմամբ (էթնոսոցիոլոգիա, սփյուռքա-

գիտություն, ցանցային հարաբերությունների ուսումնասիրություն): Հետազոտության տվյալների վերլուծության մեջ կիրառվել է նաև ցանցային վերլուծության մեթոդը՝ որպես նոր մոտեցում:

Որպես նախնական հետազոտական վարկածներ ներկայացվում են հետևյալները.

- Սփյուռքի յուրաքանչյուր ուսումնասիրված համայնքում գործող սոցիալական ցանցերը ամրագրում են համայնքի նշանակալի բնութագրիչներ:
- Սփյուռքահայերի մոտ դրսևորվում են էթնիկ ինքնակազմակերպման առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են համայնքներում գործող սոցիալական ցանցերի գործառնության բնույթով:
- Այլազգ միջավայրում հոծ բնակությունը հանդիսանում է կատալիզատոր ինքնակազմակերպման համար:
- Սփյուռքի համայնքներում փոխհարաբերությունների խտությունը և դերերի համընկնումը հանգեցնում է համայնքի ներփակման:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ սփյուռքի հայկական համայնքերում սոցիալական ցանցերի դերի բացահայտումը թույլ կտա պարզաբանել մի շարք հասկացություններ, ինչպես նաև կընդլայնի այլազգի միջավայրում սոցիալական կապերի գործառնության առանձնահատկությունների վերաբերյալ տեսական գաղափարներն ընդհանրապես:

Գործնական նշանակությունն այն է, որ ուսումնասիրության արդյունքները կարող են հիմք հանդիսանալ նոր միջավայրերում հայերի տարբեր խմբերի գործունեության հետագա զարգացումների և կանխատեսման համար: Ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տվյալները կարող են օգտագործվել սփյուռքին ուղղված քաղաքականությունների մշակման մեջ: Հարկ է նշել նաև, որ ուսումնասիրությունների արդյունքները հնարավորություն են տալիս դուրս բերել ընդհանուր մեխանիզմներ, որոնք կարելի է տարածել սփյուռքում նմանատիպ հատկանիշներով բնութագրվող սոցիալական խմբերի կամ համայնքների վրա: Ստացված արդյունքները կարող են կիրառելի դառնալ նաև սփյուռքի համայնքային, ազգային-մշակութային կառույցների կազմակերպման աշխատանքներում: Դրանք թույլ կտան ապահովել պայմաններ՝ նոր անդամների ներգրավման և համայնքի ինքնակառավարման մակարդակի բարձրացման համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Աշխատանքը քննարկվել և հավանության է արժանացել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժնի նիստում: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են ինը գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել Հայաստանի և արտասահմանյան հրատարակություններում: Ատենախոսության մեջ քննարկվող հայեցակետերը, դրույթներն ու հարցադրումները ներկայացվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ իրենց բաժիններով, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Ատենախոսությունը եզրափակվում է հավելվածով (նկարներ, աղյուսակներ, գծապատկերներ):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հակիրճ հիմնավորվել է հիմնախնդրի ուսումնասիրման կարևորությունն ու արդիականությունը, շարադրվել են հետազոտության հիմնական նպատակը և խնդիրները, շեշտադրվել է աշխատանքի գիտական նորարարությունը, ցույց է տրվել նրա տեսական և գործնական արժեքը, ինչպես նաև ներկայացվել են մեթոդաբանությունն ու գիտական աղբյուրները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Առաջին գլխում ներկայացված է սոցիալական ցանցին վերաբերող մի շարք տեսական մոտեցումներ և իրականացված հետազոտություններ, որոնք թույլ են տալիս վերհանել սոցիալական ցանցը որպես երևույթ, անդրադառնալ դրա էությանը, ձևավորման նախադրյալներին, բնույթին, տեսակներին և այլն:

«Սոցիալական ցանցի ուսումնասիրության տեսական մոտեցումները և մեթոդաբանական խնդիրները» ենթագլխում ներկայացված է սոցիալական ցանցի ուսումնասիրության վերաբերյալ հետազոտական և գիտական դաշտում առկա գրականության, տեսական մոտեցումների, իրականացված հետազոտությունների համալիր վերլուծություն:

«Սոցիալական ցանցի հիմնական բնութագրիչները» ենթագլխում ներկայացված են սոցիալական ցանցի կառուցվածքային և բովանդակային բնութագրիչները, որակական և քանակական չափման ցուցիչները, որոնք թույլ են տալիս որոշել ցանցի սահմանները, տեսակը, չափը և այլն:

«Սոցիալական ցանցի գործառույթները էթնիկ խմբում» ենթագլխում ներկայացված է, ցանցի դերը էթնիկ խմբում, դրա առանձնահատկությունները պայմանավորող գործոնները, որոնք ներազդում են համայնքի վրա՝ որոշելով վերջինիս որակական և քանակական ցուցանիշները, ներկայացուցիչների կարգավիճակը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

Երկրորդ գլուխը նվիրված է հայկական սփյուռքում սոցիալական ցանցի գործառնության առանձնահատկություններին, համայնքի ներսում ցանցային հարաբերություններին, ինչպես նաև ինքնակազմակերպման գործընթացին՝ սոցիալական ցանցի համատեքստում:

«Ցանցային հարաբերությունների էթնիկ առանձնահատկությունները հայկական սփյուռքում» ենթագլխում ներկայացված են տեսական մոտեցումներ, և որակական բնույթի հետազոտական նյութ, որոնց վերլուծությունը թույլ է տալիս դուրս բերել հայկական սփյուռքի առանձնահատուկ բնութագրիչներ:

«Սոցիալական ցանցի գործառնության բնույթը հայկական համայնքներում» ենթագլխում փորձ է արվում հասկանալ, թե ինչպես և ինչ չափով է սոցիալական ցանցը գործառնում հայկական համայնքներում, ինչ հնարավոր ազդեցություն կարող է ունենալ ցանցի գործառնությունը համայնքի ներկայացուցիչների և, ընդհանրապես, համայնքային կյանքի վրա:

«Հայկական համայնքների ցանցային ինքնակազմակերպման գործընթացը» ենթագլխում ներկայացված է հայկական սփյուռքի համայնքների ինքնակազմակերպման առանձնահատկությունները, մասնավորապես, դրա ցանցային բնույթը: Այս ենթագլխում փորձ է արվում ուսումնասիրվող դեպքերի օրինակով դուրս բերել սոցիալական ցանցի գործառնության ընդհանուր մեխանիզմներ, համայնքի տիպական կառուցվածքի մոդել:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Երրորդ գլուխը նվիրված է Թեհրանի և Բեյրութի հայ համայնքների ներսում սոցիալական ցանցի ընդհանուր պատկերի դուրս բերմանը, ցանցի գործառնության առանձնահատկությունների քննարկմանը:

«Սոցիալական ցանցի գործառնության առանձնահատկությունները Թեհրանի հայկական համայնքում» ենթագլխում ներկայացված է Թեհրանի հայկական համայնքի պատկերը՝ ներառելով պատմական ակնարկ, պաշտոնական, փաստական տվյալներ համայնքի ժողովրդագրական, պատմամշակութային, սոցիալ-տնտեսական ոլորտների վերաբերյալ: Բացի դրանից, քննարկվում են համայնքի ներսում անհատական, խմբային և կազմակերպական մակարդակի ցանցային հարաբերությունները: Փորձ է արվում առանձնացնել էթնիկ բաղադրիչն այդ փոխհարաբերությունների մեջ և պարզել, թե որքանով են դրանք կրում առանձնահատուկ բնույթ: Ենթագլխում վերլուծության է ենթարկվել հեղինակի հավաքած հարուստ դաշտային նյութը, ինչը հնարավորություն է ընձեռում եզրահանգումներ անել համայնքի ցանցային գործառնության առանձնահատկությունների վերաբերյալ:

«Սոցիալական ցանցի գործառնության առանձնահատկությունները Բեյրութի հայկական համայնքում» ենթագլխում ներկայացված է Բեյրութի հայկական համայնքի պատկերը՝ նախորդ ենթագլխում քննարկված մոտեցումների և տվյալների վերլուծության համանմանությամբ, ինչը համադրական համեմատության լայն հնարավորություն է տալիս:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եզրակացության մեջ ամփոփվում են ատենախոսության մեջ առկա հիմնահարցերը, եզրահանգումները և առաջարկները: Նկատի առնելով առաջադրված խնդիրների յուրահատկությունը և հիմնվելով սոցիալական ցանցերի կառուցվածքի և գործառնության մասին ժամանակակից տեսությունների և նոր էմպիրիկ նյութերի վրա, առաջադրվել են մի շարք եզրակացություններ:

- Իր ձևավորման ընթացքում հայկական սփյուռքը, որպես ավանդական, դասական սփյուռքի օրինակ, ստեղծել է ինքնակազմակերպման առանձնահատուկ մեխանիզմներ: Պայմա-

նավորված ազգակցական-հարևանական հարաբերությունների ավանդույթով, աջակցության և փոխանակության բնութագրիչ-ներով, ինչպես նաև ինքնության հիմնական տարրերի (լեզու, կրոն, մշակույթ, ընդհանուր պատմություն, գաղթի պատճառներ և այլն) համասեռությամբ, նոր միջավայրում հայերը կարողացել են ձևավորել համայնքներ՝ ինքնակազմակերպվելով ցանցային համագործակցության սկզբունքով վստահության և երաշխիքների ապահովման միջավայրում:

- Այլազգ միջավայրում ցանցային վարքի փոփոխության կամ առանձնահատկությունների պահպանման համար կարևորագույն գործոններից է տվյալ միջավայրի ազդեցության և ներհամայնքային գործոնների հարաբերակցությունը: Որևէ մեկի գերիշխումը հանգեցնում է համայնքում բոլորովին այլ սոցիալական հարաբերությունների և վարքի ձևավորման:
- Համայնքային կառույցներում զբաղեցրած դիրքն անմիջական ազդեցություն ունի համայնքում անհատին վերագրվող կարգավիճակի վրա: Սա կապված է համայնքում սոցիալական հնարավորությունների ընտրության սահմանափակության և առկա միջանձնային հարաբերություններում դերերի համընկման բարձր հաճախականության հետ: Ստացվում է, որ որևէ կառույցում անձի զբաղեցրած դիրքը դառնում է նրա բնութագրիչ հատկանիշը և դառնում կարգավիճակի սահմանման տարր:
- Սփյուռքում համայնքային կազմակերպությունները սահման են հանդիսանում «հայկականության» պահպանման համար: Դրանք դառնում են «տարբերության տարածքների» ֆիզիկական ընդգծման սահմաններ: Միջմշակութային սահմանագծման մեջ համայնքային կազմակերպությունները հանդես են գալիս մի կողմից զտման գործառույթով, մյուս կողմից կամրջում են երկու մշակույթները. օրինակ, Թեհրանի դեպքում դրանց գործունեությունը պատնեշի դեր է կատարում հայկական և այլ մշակույթների միջև, իսկ Բեյրութում առավելապես կամրջում է:
- Հետազոտական մակարդակում տարբեր չափի, բնույթի և ֆորմալության աստիճանի համայնքային կազմակերպությունների կողքին անհրաժեշտ է նկատի ունենալ նաև հայահոծ թաղամասերը, որպես համայնքային կառուցվածքի ինքնուրույն միավոր: Ինքնության կառուցակցման և ինքնակազմակերպման գործընթացներին հայահոծ թաղամասերը մասնակցում են որպես առանձին գործոն և ունեն ազդեցության գրեթե նույն չափը, ինչ համայնքային կառույցները:

- Ըստ իրականացված հետազոտության տվյալների՝ Թեհրանի հայ համայնքում գործում է բարդ ցանցային համակարգ, որտեղ կախված համայնքային կառույցներում ներգրավվածության խորությունից՝ նվազում է անձնավորվածության աստիճանը:
- Թեհրանի հայերի շրջանում ազգակցական կապերը բավականին խիտ են դասավորված: Համաձայն հետազոտության որակական տվյալների՝ մեկից մյուս անծանոթ անհատին դիմելու համար կարելի է ունենալ ընդամենը երկուսից երեք միջնորդ: Սա ցանցային խտության բավականին բարձր ցուցանիշ է:
- Համաձայն իրականացված հետազոտության տվյալների՝ Բեյրութի հայ համայնքում դրա ներկայացուցիչների ներգրավվածության բարձր աստիճանը խոսում է համայնքի ինքնակազմակերպման և ինքնակառավարման գործում բարձր մասնակցայնության մասին:
- Համայնքի ինքնակառավարման վրա պետության կողմից սահմանված հատուկ խոչընդոտների բացակայությունը, համայնքի ներկայացուցիչների սոցիալական ակտիվության և հնարավոր նախընտրությունների բազմազանությունը, համայնքի ներսում փոխհարաբերությունների պայմանականությունների բացակայությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Բեյրութի հայ համայնքն իր բնույթով բաց է:
- Ի տարբերություն Թեհրանի, Բեյրութի համայնքում ցանցային ապակենտրոնացումն ավելի բարձր աստիճանի վրա է գտնվում: Սա հաստատում է Բեյրութի ցանցի առանձին միավորների առավել բարձր ինքնակազմակերպվածությունն ի համեմատ Թեհրանի, որտեղ ցանցի կենտրոնից հեռանալով՝ միավորների ինքնակազմակերպումը թուլանում է:
- Հիմնվելով իրականացված հետազոտության տվյալների վրա, կարելի է եզրակացնել, որ և՛ Թեհրանի, և՛ Բեյրութի հայ համայնքներում՝ առկա է սոցիալական հարաբերությունների անձնավորվածության բարձր աստիճան: Երկու դեպքում էլ փոխհարաբերությունների կառուցակցման ժամանակ առավել մեծ վստահություն կա անձանց նկատմամբ, քան կազմակերպությունների, նույնիսկ այն պարագայում, եթե անձը հանդիսանում է կազմակերպության ներկայացուցիչ:

Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքների ցանկ: Ատենախոսության բովանդակությունն արտա-ցոլված է հեղինակի հետևյալ աշխատանքներում՝

1. Ներսիսյան Ս. Ա. (հեղինակակցությամբ՝ Կարապետյան Ռ. Ս.), 2013, Экономические взаимосвязи Армения – диаспора в России и роль социальных сетей, ԵՊՀ տնտեսագիտության տարեգիրք, Երևան, էջ 691-700:
2. Ներսիսյան Ս. Ա., 2014, Ցանցային հարաբերությունների առանձնահատկությունները սփյուռքում. հայերի ինքնակազմակերպման խնդիրներն այլէթնիկ միջավայրում, Հայերը սեփական և այլազգի միջավայրում. համեմատական էթնոսոցիոլոգիական հետազոտություններ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 93-114:
3. Ներսիսյան Ս. Ա., 2017, Ցանցային հարաբերությունները Հայաստան ներգաղթած սիրիահայերի շրջանում, ՀԱԲԻՏՈՒՍ 2. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ, խմբ. Հ. Մելքումյան, Ռ. Հովսեփյան, Երևան, էջ 195-209.
4. Нерсисян С. А., 2017, Особенности формирования сетевых отношений в армянской диаспоре, Ереван “Вестник Арменоведения”, № 1, стр. 195-205.
5. Ներսիսյան Ս. Ա., 2017, Ցանցային հարաբերությունների առանձնահատկությունները Բեյրութի հայերի շրջանում, Երևան, «Կանթեղ: Գիտական հոդվածներ», N3, էջ 167-173:
6. Ներսիսեան Ս. Ա. (համակցությամբ՝ Տանաջեան Լ. Ա.), 2018, Թբիլիսիի հայ համայնքի ներկայ իրավիճակը, Պէյրութ, «Հայկազեան Հայագիտական հանդէս», հ. ԼԸ (38), էջ 614-654:
7. Ներսիսյան Ս. Ա. (հեղինակցությամբ՝ Տանաջյան Լ. Ա.), 2018, Ինքնակազմակերպման գործընթացները Կալինինգրադի հայերի շրջանում, Երևան, ԵՊՀ «Պատմություն և մշակույթ» հանդես, էջ 234-241:
8. Ներսիսյան Ս. Ա., 2019, Ընտանիքը սփյուռքահայերի արժեքային կողմնորոշումներում. Թեհրանի հայ համայնքի օրինակով, Հայ ընտանիքն արդի մարտահրավերների համատեքստում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 135-146:
9. Ներսիսյան Ս. Ա. (հեղինակցությամբ՝ Տանաջյան Լ. Ա.), 2019, Կալինինգրադի հայերի ինքնակազմակերպման փորձը. ինքնության հարցեր, Երևան, ԵՊՀ «Պատմություն և մշակույթ» հանդես, էջ 168-179:

РОЛЬ СОЦИАЛЬНЫХ СЕТЕЙ В АРМЯНСКОЙ ДИАСПОРЕ (ЭТНОСОЦИОЛОГИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

РЕЗЮМЕ

Основная цель диссертации - выяснить роль социальной сети в диаспоре, на примере армянских общин Тегерана и Бейрута. Сопоставительное сравнение упомянутых общин предоставляет возможность выявить функции социальной сети общины, механизмы функционирования и роль сети в

самоорганизации общины, и т.д. В целом, в результате обобщения и типологии закономерностей, были установлены особенности функционирования социальных сетей в многонациональной среде.

В качестве объекта исследования были выбраны армянские общины Тегерана и Бейрута с учетом их внутриобщинных личных и межорганизационных сетей. Выбор объекта обусловлен целью сравнения наиболее аналогичных общин в армянской диаспоре. В результате, станет возможным выявить принципиальные различия, которые лежат в основе особенностей и разнообразия общин в армянской диаспоре.

Научная, теоретическая новизна диссертации - изучение системы социальных связей армянской диаспоры в рамках междисциплинарного подхода (этносоциология, диаспорология, исследование сетевых отношений). При анализе данных исследования, в качестве нового подхода, был применен метод сетевого анализа.

В работе предложены следующие исследовательские задачи:

- Этнические особенности формирования социальных сетей;
- Особенности функционирования социальных связей в разных этносоциальных средах;
- Взаимодействие восприятия, построения, сохранения этнической идентичности и функционирования общественных структур в диаспоре;
- Механизмы самоорганизации этнических общин в иноэтнической среде.

В первой главе рассматриваются теоретические подходы и методологические вопросы исследования социальных сетей, а также, основные характеристики социальной сети, рассматриваются функции сети в этнической группе.

Во второй главе обсуждаются основные особенности социальной сети в армянской диаспоре. Предпринимается попытка выявить этнические особенности сетей в армянской диаспоре, характер социальных сетей в армянских общинах и процесс сетевой самоорганизации в армянских общинах.

В третьей главе обсуждается общая картина функционирования социальной сети в современной армянской диаспоре на примере армянских общин Тегерана и Бейрута.

В работе был проанализирован ряд теоретических подходов и исследований, связанных с социальной сетью, что позволило выявить социальную сеть как явление, дать характеристику, пронаблюдать за формированием, характером, типами общины и так далее. Перечисленное, в свою очередь, позволило понять структурные характеристики сети, определить характерные признаки каждой из них. Анализ последних выявил механизмы функционирования сети, факторы, выявляющие их особенности,

влияющие на общину, определяющие его границы, структуру и статус ее представителей.

Результаты исследования подтвердили ранее выдвинутые гипотезы исследования, став аналитическим материалом для дальнейшего изучения проблем подобной тематики. Настоящая работа обогащает базу данных исследований по поднятым вопросам, заполняя некоторые пробелы в данной области.

На основе результатов проведенного этносоциологического исследования представлена типичная модель общины диаспоры, в которой различные составляющие сообщества взаимосвязаны по сетевому принципу. В качестве исследовательской единицы могут служить как устоявшиеся структуры общины, так и отдельные представители общины или группы.

Исследование показало, что общины, в которых доминируют децентрализованные, взаимные и интенсивные отношения, являются более гибкими и адаптируемыми. В этом контексте диаспору можно рассматривать как квазисистему, характеризующуюся различными формами установления и институционализации отношений. Согласно результатам исследования, самоорганизация и саморегуляция общин армянской диаспоры происходит одновременно в соответствии с иерархичными и сетевыми принципами.

THE ROLE OF SOCIAL NETWORKS IN THE ARMENIAN DIASPORA (ETHNO-SOCIOLOGICAL RESEARCH)

SUMMARY

The purpose of this dissertation is to clarify the role of the social network in the Diaspora, based on the examples of the Armenian communities of Tehran and Beirut. The comparison of these two communities allows for the understanding of the functions and functional mechanisms of the social network in a community, the network's role in a community self-organization, and so on. In sum, the operational specificities of the social network in an environment of a different ethnicity are determined by pattern generalization and typological analysis.

The Armenian communities of Tehran and Beirut, with their individual and inter-organizational intra-community networks, were chosen as an object of this research. Such choice is due to the purpose of the research: to compare two communities of the Armenian Diaspora with the closest sociocultural characteristics. As a result, it became possible to derive the principle differences lying beneath the specificities and diversity of the communities in the Armenian Diaspora.

The scientific and theoretical novelty of this work lies in the application of the interdisciplinary approach (ethnosociology, diasporology, study of network

relations) to the study of the system of social relations in the Armenian Diaspora. Analyzing research data using a method of network analysis is another novelty.

Topics addressed in this work are the following:

- Ethnic specificities of social network formation,
- Operational specificities of social ties in diverse ethno-social environments,
- Interplay between the perception, formation and preservation of ethnic identity and the activities of community organizations in the Diaspora,
- Mechanisms of self-organization of ethnic communities in a foreign environment.

Chapter 1 discusses theoretical approaches and methodological issues in a social network study and the core characteristics of a social network, as well as network functions in an ethnic group.

Chapter 2 discusses the main features of the social network in the Armenian Diaspora. It is an attempt to identify ethnic specificities of the relationship between the networks in the Armenian Diaspora, the nature of social network functions in Armenian communities and the process of network self-organization of Armenian communities.

Chapter 3 discusses the general picture of the social network functioning in the modern Armenian Diaspora, illustrated by examples of the Armenian communities of Tehran and Beirut.

A number of theoretical approaches and researches related to the social network studies and discussed in this work, have allowed us to draw the social network forth as a phenomenon, reflect on its essence, formation prerequisites, nature and types. This, in turn, has enabled us to understand the structural characteristics of the observed networks and determine the metrics for each network. An analysis of the latter revealed the mechanisms of network operation and the factors that determine their features, which affect the community by determining its boundaries, structure and the status of its representatives.

The results of this study confirmed the previously established research hypotheses and have been compiled into an analytical material for further study of such problems. Hereby, this work contributes to the research database on the posed questions, filling some gaps that exist in the professional field.

On the whole, based on the results of the ethno-sociological study, a typical model of the diaspora community is presented, in which the various components of the community are interconnected by a network principle. The subject of this research is both community organizations and individual representatives or community groups. The interconnected network requires compliance with certain conditions. The research shows that the communities dominated by decentralized, reciprocal, and strong connections are more flexible and adaptable. In this regard, the Diaspora can be seen as a superstructure establishing and institutionalizing

relations of various forms. According to the research findings, self-organization and self-regulation of the Armenian communities of the Diaspora occur simultaneously by hierarchical and network principles. This complicates the structure of the mentioned communities, leading to a more efficient operation.